



## պողպատի փայլ եւ հուսալիություն՝

### Չեր միջավայրում

#### Ի՞նչ է չժանգոտող մետաղը

Չժանգոտող մետաղը բարձր ձուլվածքի մետաղ է, որը հիմնականում օգտագործվում է իր հակակոռոզիոն հատակնիչի համար: Չժանգոտող մետաղի ընտանիքի հիմնական առանձնահատկությունն այն է, որ վերջինս պարունակում է նվազագույնը՝ 10,5 տոկոս քրոմ: Սա հնարավորություն է տալիս չժանգոտով մետաղին դիմակայել կոռոզիոն միջավայրում կամ քայքայիչ (էռոզիա առաջացնող) քիմիական միջավայրում: Գոյություն ունեն մոտ 60 տարբեր տեսակի չժանգոտող մետաղ, որոնք բաժանվում են 5 կատեգորիաների: Մեր ընկերությունը հիմնականում օգտագործում է չժանգոտող մետաղի S/S Grade 304, 201, 430 տեսակները:

#### Չժանգոտող մետաղի պատմությունը

Չժանգոտող մետաղը հայտնաբերել է անգլիացի Հերի Բրերլին 1913 թվականին: Փորձերից մեկի ժամանակ նա գրանցել է, որ մետաղի դիմադրությունը կոռոզիայի դեմ աճում է , երբ քրոմի պարունակության տոկոսը բարձրացվում է մինչև 12 եւ ավելի:

#### Չժանգոտող մետաղի օգտագործման ոլորտները

Մասնագիտացված խոհանոցային սարքավորումներ և սպասք

Կենցաղ

Սննդի արտադրություն

Շինարարություն

Բժշկություն